19. ՄՕԼԼԱ-ԱԼԻ. —Աղ-Զայի արևմուտքն, ունի 10 տուն բնակիչ։

Մերկեզերի վերին մասն յարևելս ձգուած է, վերջին հինգ գիւղօրայք ևս յարևելս ձգուած մասին մէջ գտնուելով Գարա-Քիլիսէի հիւսիսային բարձրութեան վերայ կընկնին և որոյ մօտ են, որով Գարա-Քիլիսէի կառավարութեան կը պատկանին։

Մերկեզեր զրեթէ բոլորովին լեռնային լինելով արտօրայք շատ քիչ են, նամանաւանդ ժողովուրդն հօտ և անդեայ պահելու զբաղուած լինելուն՝ ուշադրութիւն չեն դարձնէր նաև եղած արտօրէից վերայ, շատ քիչ ոնգամ կը սերմանեն։

Ամեն տուն ունի ոչխար, աղքատներն ևս գոնէ ունենալու են քանի այծ, մի կով։

Ամենապատուական առջառներ գոմէշ, եզներ և կովեր յառաջ կգան տեղս, այնպէս իւղի և մսի մէջ կլցուին, որ իւրեանց ծանրութիւնը հազիւ հազ կտանեն։ Երբեմն կարգ մի կանայք խումբ մի եզներ իւրեանց առաջ խառնուած՝ կը շրջին ադրուլաղ լեռն, կիջնան Կապուտայ մերձականերն եղած եղևնեաց անտառն, ուստի եզներուն չորացած փայտ բեռցնելով, կը բերեն Թ. գալէ վաճառելու. ոմանք ևս ժամ և այլ կանաչեղէն, ցմիշտ բուրդը ձեռին մանելով առաջ կը-զնայ։

Մերկեզեր գտնուած քուրդ կանայք, կարմիրեռս, կայտառ և առողջ կազմ ունին և շատ աշխատասէր են։

Այս վայրն ճանապարհից դուրս՝ մի խուլ և լեռներով կզգիտցած վայր է. տարւոյն մէջ հազիւ կպատահի որ քանի անձինք այս տեղէն ի Կաղզուան անց-